



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10633

658

7-39



51  
no. 1038

1038

150

2002



# ԲՐԻՆՁԻ

## ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բրինձն ահագին սպառում ունի՝ սննդարար և դիւրամարս ըլլալուն պատճառաւ : Պաշտօնական վիճակագրութեան մը համեմատ, բրինձը գլխաւոր կամ միակ սնունդն է աշխարհի բնակիչներէն կէսէն աւելին : Բրինձ ուտողներուն մէջ կը գտնուին 1. — Չինաստան, իր 400 միլիոն բնակիչներով (աշխարհի բնակչութեան 27.5%<sub>0</sub>) . 2. — Հնդկաստան 273 միլիոն (18.6%<sub>0</sub>) . 3. — Ճաբոն 39 միլիոն . 4. — Ասիոյ կամ Ափրիկէի ուրիշ երկիրներ, ինչ 80 միլիոն : Ասոնց վրայ պէտք է աւելցնել Ամերիկայի, Աւստրալիոյ և Եւրոպայի մէջ սպառած բրինձը : Ահա բրինձի հատիկներուն հարիւրորդական բաղադրութիւնը . —

Բնասպիտ	7.0
Ճարպ	0.9
Բնածուխի ջրատ (Hydrate de Carbone)	77.4
Խորշանիւթ	0.6
Հանքային նիւթեր	1.0
Ջուր	13.1
	100

Բրինձը, բնասպիտակային նիւթեր շատ չունենալուն պատճառաւ, չի կրնար կատարեալ սնունդ մը նկատուիլ : Պէտք է ուրեմն առնել զայն շատ բնասպիտ պարունակող նիւթերու, մասնաւորապէս միսի և ձուկի, կամ զանազան համեմներու հետ : Այս կերպով է որ այս արմտիքն իրենց սովորական սնունդ ընող ժողովուրդները կրնան ամէն օր

մեծ քանակութեամբ սպառել զայն : Բրինձին ալիւրէն հազ չի շինուիր, մածուցիկ նիւթերու բացակայութեան պատճառաւ : Բրինձի գործածութիւնը, հակառակ բարձր գինին, յանձնարարելի է դիւրամարս ըլլալուն համար, մասնաւորապէս այն եղանակին ուր դժուար է ընտիր տեսակ գետնախնձոր գտնել, այսինքն Ապրիլին, Մայիսին և Յունիսին : Բրինձը կրնայ գործածուիլ միսին, հաւկիթին, կաթին և համեմներու հետ : Նոյն իսկ ամէնէն փափուկ ստամոքաները կրնան մարսել զայն, կը բաւէ որ լաւ եփուած ըլլայ : Նշայի կողմէ ճոխ ըլլալուն համար, բրինձի փոշին կը գործածուի մորթը կակուղցնելու : Այս պատճառաւ բաւական մեծ քանակութեան կը հասնի բրինձի փոշիի սպառումը : Արեւելցիք շատ կը գործածեն բրինձը : Բրինձով տեսակ մը օղի կը շինուի որուն ձաքոնցիք սաքի կ'ըսեն և Չինացիք՝ սամչու : «Իտալական» ըսուած յարգերը, որք նրբարուեստ կողովներու և մանաւանդ ամառնային զլխարկներու շինութեան կը ծառայեն, բրինձի յարգերն են սովորաբար :

Միջազգային Վաճառականութիւնը. — Գերմանիա կը ներածէ տարեկան  $3\frac{1}{2}$  միլիոն մէդրական կենդինար և կ'արտածէ 1 միլիոն : Ֆրանսա կը ներածէ 18 միլիոն քիւօ և կ'արտածէ 8 միլիոն : Աւստրիա կը ներածէ 1 միլիոն մէդրական կենդինար : Արտածում աննշան : Սպանիա կ'արտադրէ  $2\frac{1}{2}$  միլիոն հարիւրալիտր և կ'արտածէ 80 հազար կենդինար : Ներածում աննշան : Մ. Նանանգները կը ներածեն 700,000 մէդրական կենդինար : Արտածում աննշան : Իտալիա կ'արտադրէ  $6\frac{1}{2}$  միլիոն հարիւրալիտր և կ'արտածէ մեծաքանակ : Գլխաւոր գնորդներն են Հարաւային Ամերիկա և Աւստրիա : Բրինձը ձաքոնի զլխաւոր մշակութիւններէն մին է : Տարեկան հունձք, միջին հաշուով, 170 միլիոն հարիւրալիտր :

Ճավայի մէջ ալ բրինձն առատ է : Տարեկան արտադրութիւն 4 միլիոն թօնօ : Այս ահագին քանակութիւնը չի բաւեր սակայն և 56 հազար թօնօ ալ կը ներածուի մասնաւորապէս Սայկօնէ և Սինկարուրէ : Ճավայի բրինձը ճերմակ, կարմիր կամ սև կ'ըլլայ : Բրինձուաներու ուղղման գրութիւնը շատ կատարելագործեալ է ի Ճավա : Չկայ հողի կտոր

մը ուր ջուրն առատ չըլլայ : Բրինձ մշակելու համար կազմուած զլխաւոր անանուն ընկերութիւնը 1898 ին 30 % շահաբաժին վճարեց :

Մեքսիքա կ'արտադրէ 200,000 մէդրական կենդինար և կ'արտածէ 10,000 կենդինար : Ներածում չունի :

Անգլիա իր գաղթավայրերէն կը ներածէ 2 միլիոն սղերլինի մօտ և օտար երկիրներէ (Հոլանտա, Գերմանիա, Ճաբոն) 700,000 սղերլինի : Պիրմանիա և Պէնկալ ամէնէն աւելի բրինձ կը ծախեն Անգլիոյ :

Պիրմանիա կ'արտածէ 2 միլիոն թօնօ : Անգլիայէն դատ Պիրմանիոյ զլխաւոր յաճախորդներն են Եգիպտոս, որ 40 միլիոն բուբիի բրինձ կ'ստանայ և Ճաբոն՝ 5 միլիոն բուբիի :

Ռուսիա մեծ քանակութեամբ բրինձ կը ներածէ զլխաւորապէս Պալգիկի նաւահանդիսաներէն : Ամբողջ ներածումն է, պաշտօնական վիճակագրութեան մը համեմատ, 400,000 բոււ (1) :

Սիամ մեծաքանակ բրինձ կը մշակէ : Հէքդար զլուխ միջին հաշուով 3000 քիւօ բրինձ կ'արտադրուի : 1898ի արտադրութիւնն էր 1 միլիոն թօնօ, որուն կէսը արտածուած է : Բրինձի գինը տարուէ տարի աւելնալու վրայ է Սիամի մէջ : 1895ին թօնօն 85 ֆրանք էր, բայց 1896ին բարձրացաւ 120 ֆրանքի և 1898ին՝ 130 ֆրանքի :



(1) Մէկ բոււ = 46 քիւ. 400



# ԱՆՈՒՂԻՂ ՄՐՑՈՒՄ

Անուղիղ մրցումը, լայն առումով, կը նշանակէ ապօրէն գործեր, որոնցմով գործարանատէրներն ու վաճառականները կը ջանան յաճախորդն իրենց քաշել ի վնաս ուրիշ մրցակիցներու :


Անուղիղ մրցում է երբ գործարանատէր մը կամ վաճառական մը իր մրցակիցին գործը կազմալուծելու նպատակաւ անոր գործաւորները կամ պաշտօնեաները կը հրապուրէ պարգեւներու կամ խոստումներու միջոցաւ :

Ճարտարական կամ առեւտրական հաստատութեան մը պետք իրաւունք ունի իր տան կազմակերպութեան վերաբերեալ բաները գաղտնի պահել : Երբ գործաւոր մը կամ պաշտօնեայ մը կը ձգէ այդ գործը, պարտաւոր է երեւան չհանել ապրանք մը շինելու եղանակները, յաճախորդներու անունները, կատարուած գործառնութիւնները եւայլն : Անուղիղ մրցում է երբ հակառակորդ վաճառատուն մը ուզէ օգտուիլ այն գաղտնիքներէն որոց միջամուխ եղած է այդ գործաւորը կամ պաշտօնեան :

Ամէն մարդ ազատ է իր ապրանքը գովելու, բայց այդ ազատութիւնն ալ իր սահմաններն ունի : Անուղիղ մրցում է ուրիշի մը ապրանքին արժէքը կոտորող խօսքեր ընել կամ հասարակութեան մէջ սխալ կամ գայթակղալից լուրեր տարածել մրցակիցի մը մասին :

Անուղիղ մրցում է երբ ապրանքի մը կեղծը կը շինուի, ծանօթ վաճառատան մը անունը չարաչար կը գործածուի եւն :

Գործարանատէրներն ու վաճառականները պէտք ունին իրենք զիրենք հասարակութեան ճանչցնելու : Այս պատճառաւ կրնան որոշ նշաններ գործածել, ինչպէս վաճառանիշ, որ ապրանքներուն վրայ կը դրուի զանազան ձեւերով : Վաճառանիշը սեփականութիւն մ'է եւ չի կրնար իւրացուիլ մրցակցի մը կողմէ :



# ԱՐՅԵՍՏՆԵՐ

## ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կաշիները, փոսէն հանուելէ ետքը, շատ մը գործողութիւններու կ'ենթարկուին կակղութիւն եւ փայլունութիւն ստանալու համար : Կաշեգործը, մորթերուն վրայէն հանելէ ետք միւսը, որ խաղախորդին կողմէ ձգուած կ'ըլլայ, զանազան պատրաստութիւններու կ'ենթարկէ զանոնք : Մասնաւորապէս կը գործածէ խառնուրդ մը որ կը բաղկանայ տեկրայէ<sup>(1)</sup> կամ իւղէ, որուն մէջ ճրագու (տոն ետղը) ալ կրնայ դրուիլ : Մորթերն յետոյ կ'ողորկուին, կը ներկուին, կը փայլունանան, կը դրոշմուին եւայլն : Կաշեգործն իր աշխատութիւնը կը կատարէ ձեռքով կամ մեքենաներու միջոցաւ : Այդ աշխատութիւնը կը բաղկանայ հետեւեալ գործողութիւններէն . — կոխտում, թրջում, քերում եւայլն : Կաշին նախ կը դնեն ջրով լեցուն տաշտի մը մէջ, յետոյ վրան վանդակ մը դնելով կը կոխտեն, որով կաշին կը կակուղնայ : Այս գործը կատարելու համար մեքենայ մը կայ, որ աշխատութիւնը կը դիւրացնէ : Քերումը նախ կաշին բազմաթեղ մազերը կը մաքրէ եւ յետոյ կը հաւասարցնէ զայն : Այս աշխատութեան համար կը գործածեն պողպատէ դանակ մը եւ սեղան մը : Կաշին կը տարածեն սեղանին վրայ եւ յետոյ կը քերթեն դանակով : Ապա միահարթ երեւոյթ մը կուտան անենիի (իւվեզ ալպաճը) փայտէ շինուած գործիքով մը որ սղօցի պէս կը տրուած ակոսներ ունի : Այս աշխատութեան տեսակը կը տարբերի մորթերու գործածութեան համեմատ : Փորձուած է մեքենաներ գործածել, բայց գոհացուցիչ արդիւնք մը ձեռք

(1) Երբ մորթերը բողափ լուացրի մը մէջ կը մարրեն, հեղուկ մը կը գոյանայ որուն իւրոտ մասը կը զատեն ծծմրային թժուով : Այդ իւղին կ'ըստի րեկ, որ կաշեգործութեան մէջ կը գործածուի :

բերուած չէ մինչև հիմա : Ամէն մորթ հաւասարապէս միեւնոյն գործողութեան չենթարկուիր : Կօշիկի ներքան և ձիւկազմած շինելու ծառայող կաշիները քաշուելու գործողութիւն մը կը կրեն : Ծրագուով յզկուած կաշիները, որք ընտանհարթութիւն չեն ունենար, շատ սոկուն կ'ըլլան : Ծրագուն գործածելէ առաջ, մորթերը կ'անցընեն յարդի կրակի մը վրայէ որ աւելի ընդունակ կ'ընէ զանոնք իւզոտ նիւթը ծծելու : Միջին մեծութեամբ մորթի մը համար սովորաբար 3 քիւօ ճրագու կ'երթայ : Իւզոտ կաշիները կակուղ կ'ըլլան : Անգլիական կաշին, որ ստանարով կը ներկուի, իւզոտ կաշի մ'է : Ռուսական կաշիները, որք ընդհանրապէս կարմիր են, իրենց ախորժելի հոտը կ'առնեն ցարասի (դուշ աղանք) իւզի գործածութենէն : Այդ իւզը խոնաւութենէ և ուտիճներէ կը պահպանէ կաշին, որուն վրայ հաճարի ալիւրի խմոր կը քսեն :

## ԱՌԵԼՈՐԱԿԱՆ ՏԵՍՐԱԿՆԵՐ

Ե Ի

### ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ



#### Դ Ա Ս Ը Ն Ք Ա Յ Ք

Առեւտրական և ծախսարարութեան օրէնսդրութեան

Առեւտրական տեսրակներուն օգտակարութիւնը. — Տեսրակ բռնելը, որ շատ օգտակար է իր գործերուն վիճակին վրայ միշտ ստոյգ գաղափար ունենալ ուղղի մը, ո՛չ միայն օգտակար, այլ նաև անհրաժեշտ և պարտաւորիչ է վաճա-

ռականին համար : Տեսրակներն են որ օրն օրին տեղեկութիւն կուտան իր կացութեան վրայ, ծախքն ու հասոյթը կը նշանակեն, շահն ու վնասը կը ցուցնեն : Մէկ խօսքով, առեւտրական տեսրակները կարեւոր օժանդակ մ'են վաճառականին, և կարգապահութեան ու խնայութեան լաւագոյն երաշխաւորութիւն մը :

Պարտաւորիչ տեսրակներ. — Օրէնքն ալ պարտք դրած է վաճառականներուն վրայ՝ տեսրակներ բռնել : Պարտաւորիչ տեսրակներն երեք են . 1. — Օրհաշիւ, որ այսպէս կը կոչուի օրն օրին բռնուելուն համար : Վաճառականը պէտք է արձանագրէ հոն ինչ որ կրնայ ազդել իր հարստութեան ու վարկին վրայ : Նախ՝ իր բոլոր առեւտրական գործողութիւնները, ինչպէս զնում և վաճառում ապրանայ, վճարում, յանձնառութիւն և այլն : 2. — Նամակներու ընդօրինակութեան տեսրակ : Վաճառականը պէտք է խնամքով պահէ իր ստացած նամակներն և մասնաւոր տեսրակի մը մէջ ընդօրինակէ իր զրկած նամակները : Ասիկա շատ կարեւոր գործ մ'է, վասն զի առուտուրի մէջ գործերն յաճախ թղթակցութեամբ կը կատարուին և եթէ երկու վաճառականներու միջև վէճ մը, անհամաձայնութիւն մը ծագի, շատ անգամ փոխանակուած նամակներն են որ վճուին գլխաւոր տարրը կը հայթայթեն դատաւորին : 3. — Հաշուեկշռի տեսրակ : Վաճառականը պարտաւոր է ամէն տարի հաշուեկշիւ մը հանել, որու մէջ նշանակուած ըլլան իր պարտքն ու գոյքը : Այս հաշուեկշիւը կ'արձանագրուի մասնաւոր տեսրակի մը մէջ : Վաճառականը պարտաւոր է իր տեսրակները մեծ խնամքով բռնել, յօդուածներն օրուան կարգով գրել, բաց տեղեր չը թողուլ, լուսանցքը մաքուր պահել, քերթուկներ չընել ևն, յօդուածներուն կանոնաւորութիւնն ու անկեղծութիւնն ապահովելու համար : Եւրոպայի մէջ իւրաքանչիւր վաճառական իր տեսրակները կը ներկայացնէ Առեւտրական դատարանին կամ Քաղաքապետին, որք տեսրակներուն ամէն էջերը կը թուագրեն : Այս ձեւակերպութիւնը կը կատարուի առանց ծախքի, և նպատակն է արգիլել էջի յաւելում կամ ջնջում : Առեւտրական տեսրակները զրոյմատուրքէ ազատ են :

Օժանդակ տետրակներ . — Օրէնքին կողմէ միայն երեք տետրակներ պարտաւորիչ են : Բայց փորձը ցոյց տուած է որ այս տետրակներ անբաւական են և այն վաճառականը , որ այս երեք տետրակներով միայն կը շատանայ , մեծ դժուարութիւն պիտի կրէ իր գործառնութիւններուն հետեւելու համար : Ուստի , հարկ եղած է այս երեք տետրակներուն վրայ աւելցնել ուրիշներ , որք թէև ո՛չ պարտաւորիչ , բայց շատ օգտակար են : Այն երկու տետրակներ , որոց գործածութիւնն յաճախադէպ է , են Մայր հաշիւ , որ վաճառականին հետ գործ ընողներէն իւրաքանչիւրին հաշիւը կը ներկայացնէ , և Մնտուկի տետրակ , որուն վրայ վաճառականը կը թուէ ինչ որ սնտուկը մանէ կամ ելնէ , այսինքն ինչ որ վճարէ կամ ընդունի :

Առետրական տետրակներն իբր ապացոյց . — Որովհետև վաճառականութեան մէջ շատ մը գործողութիւններ տետրակներով վրայ արձանագրութեամբ միայն կը հաստատուին , այս պատճառաւ կանոնաւոր կերպով բռնուած տետրակները կրնան իբր ապացոյցման միջոց ընդունուիլ վէճի մը ատեն : Եթէ նոյն իսկ երկու կողմերը չպահանջեն տետրակները մէջտեղ հանել , դատաւորը կրնայ պահանջել : Եթէ տետրակներն հետու կը գտնուին այն քաղաքէն , ուր տեղի կ'ունենայ դատաւարութիւնը , կրնայ պաշտօն տրուիլ տետրակներուն գտնուած անդրոյն Առետրական դատարանին կամ հաշտարար դատաւորին որ քննեն , ամփոփում մը հանեն և անդեկագիր մը դրկեն : Տետրակները , ինչպէս գրած ենք արդէն , պէտք է 10 տարի պահուին : Մինչև որ այս պայմանաժամը չլրանայ , վաճառականը չի կրնար առարկել թէ տետրակները պահած չէ : Այս պայմանաժամն աւարտելէ ետքը , ազատ է չպահել , բայց եթէ պահած է , վէճի մը ատեն կրնայ երեւան հանել :

Տետրակ բռնելու պարտաւորութեան նուիրագործումը . — Մնանկութեան պարագային , պատժական տրամադրութիւն մը կայ այն վաճառականին համար որ կանոնաւոր տետրակ բռնած չէ : Այդպիսի վաճառական մը կրնայ իբր խարդախ սնանկ նկատուիլ և մէկ ամիսէն մինչև երկու տարի բանտարկութեան դատապարտուիլ :

## Գ. Հ Ա Տ Ո Ւ Ա Ս

### ԱՌՇԵՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. — Ընդհանուր ծանօթութիւններ

Սահման . — Ընկերութիւնը պայմանագրութիւն մ'է , որով երկու կամ աւելի անձեր կը համաձայնին դրամ կամ ապրանք մէջտեղ դնել և անոր արտադրած շահը բաժնել : Դրամագլուխներն ու մարդերը միացնելով , առետրական ու ճարտարարուեստական ընկերութիւնները պատճառ կ'ըլլան իրագործելու այնպիսի ձեռնարկներ որք մէկ անհատի կարողութենէն վեր են :

Ընկերութեան մը ետևան պայմանները . — Ընկերութիւնը , պայմանագրութիւն մը ըլլալով , կը կազմուի շահակիցներու փոխադարձ հաւանութեամբ : Ընկերութեան մը կազմակերպութիւնը երկու էական պայմաններ կ'ենթադրէ . 1. — Բաժին մը մէջտեղ դնել և 2. — Շահելու դիտաւորութիւն ունենալ : Մէն մի ընկեր պէտք է ո'ւ է բաժին մը բերէ , որ կրնայ նշուն դրամ կամ ապրանք և այլն ըլլալ : Ընկեր մը կրնայ նաև մէջտեղ դնել իր աշխատութիւնը կամ արուեստը : Շահ ընելու հեռանկարը երկրորդ հիմնական պայմանն է ընկերութեան մը կազմութեան : Ասիկա չի նշանակեր սակայն թէ ընկերութիւնն անպատճառ չա՛ն պիտի ընէ : Դրժբախտաբար շատ անգամ կը պատահի որ ընկերութիւն մը ո՛չ միայն ծախքը չի գոցեր , այլ կը մնասէ ալ : Բայց ինչդիրն ատոր վրայ չէ : Այն պահուն , երբ երկու կամ աւելի ընկերներ կը պայմանագրուին , անպատճառ կը յուսան դրամական շահ մը ընել ընկերութեան կատարելիք գործերէն :

Չանգալանութիւն քաղաքային եւ առետրական ընկերութիւններու . — Երկու տեսա՛լ ընկերութիւններ կան , քաղաքային և առետրական : Տարբերութիւնն ընկերութեան նըպատակին և կատարելիք գործերուն բնութեանը մէջ է : Եթէ այդ գործեր առետրական են , ընկերութիւնն ալ առ-

եւտրական կ'ըլլայ : Այսպէս են առուտուր, փոխադրութիւն ,  
 և պանքայի գործ ընկու համար կազմուած ընկերութիւնները :  
 Ընդհակառակը , ընկերութիւնը քաղաքային կ'ըլլայ եթէ իր  
 նպատակն է շահագործել ոչ-առեւտրական ձեռնարկութիւն  
 մը , ինչպէս հանքի մը շահագործութիւնը և այլն : Քաղաքա-  
 յին ընկերութիւնք Քաղաքային Օրինադրքին տրամադրու-  
 թիւններով կը վարին , իսկ առեւտրական ընկերութիւնները՝  
 երկու կողմանց պայմանադրութեամբ և առեւտրական Օրի-  
 նագրքին մասնաւոր կանոններովը , և եթէ պայմանագրին  
 կամ առեւտրական Օրինագրքին մէջ չնախատեսուած կէտեր  
 ըլլան՝ այն ատեն Քաղաքային օրինաց ընդհանուր սկզբունք-  
 ներով :


Նկարագիր առեւտրական ընկերութեանց. — Ընկերութիւնը  
 ընկերներէն անջատ մարմին մ'է և դատաւոր մը , վասն զի  
 իր գոյութիւնը արդիւնք է պայմանադրութեան մը , օրէնքի  
 մը : Այս նկատումով ընկերութիւնն ինքն է սեփականատէր ,  
 կամ պարտական : Իր ունեցածները ընկերներուն ունեցածէն  
 բոլորովին անջատ ինչք մը կը կազմեն : Որչափ ատեն որ  
 տեւէ ընկերութիւնը , ընկերները տէր չեն համարուիր ընկե-  
 րային դրամագլխին որ կը պատկանի այն բարոյական անձ-  
 նաւորութեան : Ընկերութեան ինչքը գրաւական մ'է ընկե-  
 րութեան պահանջատէրներուն համար : Ընկերներուն անձնա-  
 կան պահանջատէրները չեն կրնար ընկերութեան պահանջա-  
 տէրներուն իրաւունքն ունենալ : Առեւտրական ընկերութիւն-  
 ները , իրենց վերագրուած այս հանգամանքին պատճառաւ ,  
 ինչ ինչ ձեւակերպութիւններով միայն կրնան կազմուիլ :  
 Պայմանադրութիւնն հաստատող գրաւոր թուղթ մը պէտք է  
 ըլլայ անպատճառ և ընկերութեան կազմութիւնը հրապարա-  
 կաւ ծանուցուի : Ընկերութիւն մը , կազմուելուն պէս , կը  
 մտնէ վաճառականներու դասակարգին մէջ և իր յանձնառու-  
 թիւնները կատարել տալու համար կրնայ դատարան քաշ-  
 ուիլ : Եթէ վճարումները դադարեցնէ , սնանկ կը հրատա-  
 րակուի :

2. Առեւտրական Ընկերութիւններու տեսակները

Թուում. — Առեւտրական ընկերութիւնները կրնան տար-  
 քեր նկարագիրներ ունենալ : Ընկերներու պարտաւորութիւն-  
 ները , պայմանագրին ձեւերը , վարչութեան եղանակը կը  
 փոխուին ընկերութեան տեսակին համեմատ : Ընկերութիւն-  
 ներ կան , որոց մասնակցողներն անձնապէս պատասխանա-  
 տու են ընկերութեան բոլոր պարտքերուն համար : Այս նը-  
 կարագիրն ունեցող ընկերութիւնք կը կոչուին հաւարական  
 ( collectif ) : Ընդհակառակը , տեսնուն կոչուած ընկերութիւն-  
 ներուն մէջ , ընկերները միմիայն իրենց դրած գումարին հա-  
 մար պատասխանատու են և ըրած կորուստնին անկէ աւելի  
 չըլլար : Իրենց պատասխանատուութիւնը սահմանափակ է :  
 Քօմանսիդ ընկերութիւններու մէջ կը միանան երկու տեսակ  
 ընկերներ , ոմանք անսահման կերպով պատասխանատու և  
 ուրիշներ ալ՝ իրենց դրած ստակին չափ միայն : Քօմանսիդ  
 ընկերութիւնը կրնայ պարզ կամ բաժնեթուղթով ըլլալ , ըն-  
 կերային դրամագլխին բաժանման եղանակին համեմատ : Այս  
 թուումն ամբողջացնելու համար յիշենք այն ընկերութիւն-  
 ները , որք փոփոխական դրամագլխով ընկերութիւններ  
 ( Société à capital variable ) կը կոչուին : Դրամագլուխը կրնայ  
 աւելնալ յաջորդական վճարումներով կամ նոր ընկերնե-  
 րու յաւելմամբ և պակսիլ կամ ընկերներէն ոմանց քաշ-  
 ուելովը և կամ դրուած գումարին ետ առնուելովը : Վեր-  
 ջապէս , կայ նաև մասնակցական ընկերութիւն մը ( en parti-  
 cipation ) որ երկու կողմերու ընդունած պայմաններով և  
 ձեւերով կը կազմուի :



# ՄԵՏԱՔՍԻ ՎՐԱՅ




Մետաքսը շատ խոնաւութիւն վերցնող նիւթ մ'է, որ ամէնէն չոր վիճակին մէջ իր ծանրութեան 80%ը ջուր կը պարունակէ և կրնայ մինչև 150% պարունակել առանց թըրջած երեւալու։ Այս հանգամանքը, առեւտրական տեսակետով, ծանր անպատեհութիւններ կը ներկայացնէ։ Խարդախ մարդիկ կրնան օգուտ քաղել անկէ, և ճարտարագործը, որ մետաքս կը գործածէ, դժուարութիւն կ'ունենայ գիտնալ թէ անորանքը ճշտիւ քանի՞ արժած է իրեն։ 1750ին, Թիւրէնի վաճառականները, առաջքը առնելու համար տեղի ունեցած վէճերուն, միջոց մը խորհեցան։ Մետաքսը չորս վառարան պարունակող ընդարձակ սրահի մը մէջ դրին և հաւասար մասերու բաժնելով պատէն կախեցին։ Հոկտ. 1էն մինչև Մայիս 1, բարեխառնութիւնը պահուած էր Ռէօմիւրի 17—20 աստիճանին մէջ։ Ամառուան հինգ ամիսներու միջոցին, մետաքսը կը չորցուէր արտաքին օդին ազդեցութեամբ միայն։ Լիօնի մէջ ալ փորձեցին մետաքսը չորցնել, բայց չկրցան իրենց մէթոտն ընդունել տալ վաճառականներուն, և մինչև անցիալ դարու սկիզբը մետաքսը ծախուեցաւ այնպէս որպէս կը զրկէր արտածիչը։ Ուրեմն գնողը պարտաւոր էր իրեն անորանք եղած գինը գտնելու համար հաշուել նաև եղանակներուն և օդին բարեխառնութեան համեմատ փոփոխելի կորուստը։ 1800 Ապրիլին, Մ. Ռասէ Մօթա հնարչի արտօնագիր մը առաւ մետաքսը չորցնելու յատուկ հաստատութեան մը համար։ Յետոյ ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ հիմնուեցան։ Մրցումն այնքան սաստկացաւ որ ամէն հաստատութիւն իր յաճախորդները նպաստաւորել ջանաց, առանց հոգ տանելու տրուած տեղեկութիւններուն ճշտութեան։ Ասոր վրայ Լիօնի վաճառականք միաձայնութեամբ պահանջեցին որ հանրային մէկ հաստատութիւն

միայն ըլլայ վստահելի մարդոց յանձնելու և խիստ հակակշռի մը ենթարկելու պայմանաւ։ Թրանսական կառավարութեան 1805 Ապրիլ 5 թուակիր մէկ հրամանագիրը տուգանքի ենթարկելու սպառնալիքով ջնջեց մասնաւոր հաստատութիւններն և անոնց տեղ հիմնեց միակ հաստատութիւն մը, Առեւտրական Սենեկին վարչութեան տակ։ Չորցնելու եղանակն ալ բարեփոխուեցաւ։ Մէն մի կապոց կը դրուէր երկաթ թելերով շրջապատուած անտուկի մը մէջ կամ վանդակապատ դարակներու վրայ, որպէս զի օդը կարենայ ազատօրէն մտնել անոնց մէջ։ Չորցնելու սահմանուած պեղերը կը տաքցուէին վառարաններու միջոցաւ, մինչև Ռէօմիւրի 18—20 աստիճան։ Այս եղանակն ալ թերի էր սահմանափակ 18—20 աստիճան։ Այս եղանակն ալ թերի էր սահմանափակ, խճողում կ'ըլլար, վասն զի տեղւոյ անբաւականութիւնն անխուսափելի էր։ 1841ին միայն մասնաւոր հրամանագրով պարտաւորիչ հռչակուեցաւ Դալապոյի մէթոտին կիրառումը։ Այս մէթոտը կատարելագործուեցաւ Բերզոյի կողմէ որուն օժանդակեց Ռօժա։ Ասոր հաւար է որ մետաքս չորցնելու յատուկ գործիքներուն տրուած է Դալապօ-Բերզօ Ռօժա անունը։ Ահաւասիկ այս մէթոտին բացատրութիւնը։

— Մետաքսի հակը հաստատութեան դռնէն ներս մտնելուն պէս, մտից թիւ մը կ'ընդունի, կը կշռուի և ապրան կ'իջուցուի։ Հակին խոնաւութեան չափն հասկնալու համար 500 կրամնոց երեք նմոյշ կը հանուի հակին վրայէն, մէջտեղէն ու տակէն։ Այս նմոյշները կը բաժնուին երեք խորչերու մէջ։ Առաջին երկու նմոյշները կը բացուին ու կը չորցուին։ Երրորդը կը պահուի նոր փորձի համար, եթէ հարկ ըլլայ։ Յետոյ կը տարուին ու կը դրուին Դալապօ-Բերզօ-Ռօժա գործիքին մէջ։ Մետաքսը բռնող ձողը կը կախուի կշիռին ծայրէն, որ ջերոցին յարակից է։ Արտաքին օդին հետ հաղորդակցու-

Թիւնն արգիլելու համար կափարիչը կը գոցեն և մետաքսը 45 վայրկեանի չափ կ'ենթարկեն 125—130 սանդիկրատ բարեխառնութեան մը, մինչև որ կշիւն այլևս ծանրութեան նուազում ցոյց չտայ : Այն ատեն բացարձակ կշիւը կը գրուի ճիշտ դէմն այն նախնական կշիւին զոր մետաքսն ունէր հակէն հանուած միջոցին : Յետոյ իւրաքանչիւր նմոյշին խոնաութեան քանակութիւնը կը հաշուեն Եթէ խոնաւաչափական վիճակը մէկ նմոյշէն միւսը  $\frac{1}{3}$ էն  $1\frac{1}{2}$  օտարբերի, այն ատեն երրորդ նմոյշը փորձի կ'ենթարկուի : Ի վերջոյ, հակին բացարձակ կշիւն հանուելով, մանրամասնութիւնը կ'արձանագրուի տետրակի մը մէջ, որուն մէկ օրինակը կը տրուի մետաքսն յանձնողին և մէկ օրինակը՝ գնողին :

Մետաքսին կորուստը, որ միջին հաշուով 2.50 օտէր Գալպոյի մէթոտին գանուելէն առաջ, մինչև 1.25 օտի իջաւ, որովհետև հիմա շատ խնամք կը տարուի նուազ խոնաւ և աւելի օդասուն տեղեր մթերելու համար մետաքսը : Ֆրանսայի մէջ 16 հատ կան մետաքս չորցնելու յատուկ հաստատութիւններ, Գերմանիոյ մէջ՝ երկու (Բրէֆէլտ և Էլտէրֆէլտ), Անգլիոյ մէջ՝ երկու (Լոնտոն և Մանչէսթըր), Աւստրիոյ մէջ՝ մէկ (Վիեննա), Իտալիոյ մէջ՝ 12, Զուիցերիոյ մէջ՝ 2 (Պալ և Զիւրիխ), Ճաքոնի մէջ՝ 2, Զինաստանի մէջ՝ մէկ (Բանդոն) և 1 հատ ալ ի Նիւ-Եօրք : Գերմանիոյ, Անգլիոյ և Աւստրիոյ մէջ, այս հաստատութիւնք մասնաւոր ընկերութիւններու կը վերաբերին, իսկ Իտալիոյ մէջ Առեւտրական Սենեակներու : Զուիցերիոյ մէջ ալ մասնաւորաց սեփականութիւններ են, բայց կառավարութենէն նպաստ կ'ընդունին և անոր հակակշիւն ենթակայ են :



## Թուրքիոյ Գորգերը



### 7. — ԷՐԶՐՈՒՄԻ ՄԷՋ

Էրզրումի մէջ տարին մօտ 8000 ոսկիի գորգ կը ծախուի, որուն  $\frac{1}{3}$ ը Պոլիս և երբեմն ալ Եւրոպա ու Ամերիկա կ'արտածուի : Գորգաշինութեան յատուկ գործասեղան չկայ նահանգին կեդրոնը : Միայն քանի մը հեռաւոր գիւղերու մէջ գորգ կը հիւսեն անկարեւոր քանակութեամբ և սովորական տեսակէ : Գորգի գլխաւոր հայթայթիչն է Պարսկաստան, որ տարին աւելի քան 5000 լիրայի գորգ կը շրկէ Էրզրում : Ներածութեան մնացեալ մասը կը հայթայթեն սահմանակից նահանգներու Բիւրտ գորգագործները : Պարսկական գորգերը, թէև այլազան նկարներ ու փայլուն գոյներ ունին, բայց շատ յարգի չեն ամաթօրներու համար, որովհետև անոնց գոյնը շուտ կ'աւրուի : Առէջն ու թեզանը ընդհանրապէս բամբակէ ըլլալով, այդ գորգերը պէտք եղած կակղութիւնը չունին և հետեւապէս շուտով կը հիւսնան : Ընդհակառակը, Բիւրտերուն պատրաստած գորգերն ամբողջ բուրդէ են, սովորէն գոյներով : Ասոր համար շատ կը փրնտըուին : Գիներն են 40—100 զրշ. մէկ քառ. արշընը, ընտիր գորգերու համար և 20—40 զրշ. պարզ գորգերու համար : Պարսկաստանէ եկած գորգերն են օրքա, էան և սեւաճաւտ : Բրդականներն ընդհանրապէս էան կամ սեւաճաւտ գորգերու ձեւն ունին : Շատ հազուագիւտ է օրքա գտնել : Էրզրումի մէջ կը ծախուին նաև հաստ թաղիքէ տեսակ մը գորգեր, որք քիչէ կ'ըսուին և գորգի տեղ կը գործածուին գիւղերուն մէջ : Էրզրումցիք կը շինեն տեսակ մը գորգ  $1\frac{1}{2}$  մէդր երկայն և 1 մէդր լայն կտորներով, իւրաքանչիւրը 10—12 զրշ.ի, և մասնաւորապէս կը գործածուին պատատելու :

Պոլիս զրկուած ապուխտի հակերը : Եւրոպական գորգերու և թաղիքներու ներածուծը շատ աննշան է : Հազիւ սարեկան 100 ոսկիի կը հասնի :

### 8. — ՏՐԱՊՁՈՆԻ ՄԷՋ

Գորգի ճարտարարուեստ չկայ : Արտածուած գորգերը Պարսկաստանէ կուգան : Ատենոք այս արտածում շատ կարեւոր էր, բայց այսօր հազիւ 3000 հակ դրանգիդ կըլլայ Պոլսոյ, Եւրոպայի և Ամերիկայի համար : 1900 ին, Տրապըզոնի նաւահանգիստէն արտածուած գորգերու արժէքն էր 1,701,600 ֆր : Այս գորգերը հետեւեալ տեղերը գացած են .

Թուրքիա	Ֆր.	1,377,000
Անգլիա	»	136,200
Ամերիկա	»	85,800
Աւստրիա	}	» 63,600
Գերմանիա		
Ֆրանսա	»	37,200
Պելժիա	»	1,800

### 9. — ԶՈՆԿՈՒԼՏԱՔԻ ՄԷՋ

Արտադրուած գորգերու քանակութիւնն աննշան է, Զաֆրանսպուլույի մէջ կը շինեն ընտիր տեսակ հարար և այծի մազէ գորգեր : Թօսիայի մէջ ալ կը շինեն ստորին տեսակ հարարներ : Արտածում չկայ : Այս գորգեր օխայով կը ծախուին, օխան 8—10 զրչի : Թօսիայի հարարները տեղական սպասումը գոհացնելէ ետք իբր պատաս կը գործածուին Պարթընի ճամբով Լոնտոն արտածուած թիֆթիքներուն : Գորգի վաճառական չկայ : Գեղացիք իրենք ուզակի կը ծախեն Զաֆրանսպուլույի և Թօսիայի հրապարակներուն վրայ :



Եկամուտ . — Անգլիոյ 1900 ի հասոյթն եղած է 108,336,000 սղերլին, որ կը բաժնուի հետեւեալ կերպով .

Մաքս		20,850,000
Սերմն սուրճ	Սպառումի տուրք Սթ.	29,200,000
	Ժառանգական » »	11,400,000
	Դրոշմի » »	7,630,000
	Եկամուտի » »	18,000,000
	Զանազան » »	2,370,000
Հեռագիր և թղթատարութիւն		15,860,000
Զանազան հասոյթք		3,026,000
		<u>108,336,000</u>

Քրաղըմը (Մաքսատուրք) և Էքսայզը (Սպառումի տուրք) կ'առնուին Անգլիոյ մէջ արտադրուած կամ ներածուած ինչ ինչ ապրանքներէ, օրինակի համար ալքոլ, իր զանազան ձեւերուն մէջ, թէյ, խահուէ, քաքաս, ծխախոտ և ուրիշ մէկ կամ երկու նուազ կարեւոր ապրանքներ : Էսդէյդ տիւղին (Ժառանգական տուրք) յառաջատուական է : Ինքըմ դաքսը (Եկամուտի տուրք) հիմա Հարաւ-Ափրիկէի պատերազմին պատճառաւ 5% է, բայց սարեկան 160 սթերլինէն պակաս եկամուտներն ազատ են այս տուրքէն, որ 1894 էն մինչև 1900, 3.34% էր : Լեկս դաքսը (Կալուածական տուրք) սարին մօտաւորապէս 7,400,000 սղերլին կ'արտադրէ :

Մախք . — 1900 ին Անգլիոյ զլխաւոր ծախքերն էին հետեւեալները .

	Սղերլին
1. — Հանրային պարաքի տոկոս	25,000,000
2. — Անձնական դանձ և դատական նախարարութիւն	2,044,000
3. — Նաւատորմ	24,068,000
4. — Բանակ	20,000,000
5. — Քաղաքային պաշտօնատարք	22,025,000
6. — Մաքսային վարչութիւն	2,816,000
7. — Հեռագրութիւն և թղթատարութիւն	12,197,000
	<u>108,150,000</u>
	Գումար Սղ.

Թիւ. 1 և 2 ծախքերը կը վճարուին « Բոնսօլիտէյդը Ֆօնտ » ըստած դրամագլխէն , իսկ Թիւ 3 և 7 ծախքերը տարուէ տարի կը քուէարկուին : Բաղաքային պաշտօնարաններու յատկացած ծախքին կէսը կը տրուի դաստիարակութեան գործին : Այս գումարէն դուրս են « Հանրային Դպրոց » անունով ծանօթ և կրօնական ընկերակցութիւններէ կախալ վարժարաններու՝ « Սեքքնտերի բըպլիք սքոլս » ներու և մասնաւոր վարժարաններու ծախքերը :

Գ. — Անգղիական կայսրութեան հաշուեկշիռը . — Մէկ դարու շրջանի մէջ , Անգլիոյ ընդհանուր վիճակը սապէս ներկայացուցած է Լորա Հէլլինկըն .

	1801 ին	1901 ին
Ժողովուրդ	16,345,646	40,599,000
Միայն Լոնտոն	861,845	4,441,710
Արտածութիւնք	Ս. Ո. 28,917,000	294,014,000
Ներածութիւնք	» 21,013,000	485,076,000
Հանրային պարտք	» 537,653,070	635,040,965
Թղթատարական հասոյթ	» 716,000	12,710,000
Ընթացք Բոնսօլիտէի	» 62	98
Անգլիոյ պանքային շրջաբերած տոմսերը	» 13,845,001	30,527,700
Յորենի քուօրթըրին գինը	5, 12, 8	1, 8, 9

Սըր Ռ. Կիֆըն , Անգլիոյ ամէնէն նշանաւոր վիճակագիրներէն մին , 1899 Փետր. ին բանախօսութիւն մը ընելով « Գաղթականութեանց Արքայական Կաճառին » առջև , ներկայացուցած է Անգլիական Կայսրութեան հաշուեկշիռը , 1871 էն ի վեր : Ահա այդ հաշուեկշիռին ամփոփումը . —

Ժողովուրդ . — Ամբողջ բնակչութիւն 407 միլիոն ( որուն 50 միլիոնը անգլիացի ) , այսինքն աշխարհի բնակչութեան մէկ քառորդը : 1871 էն ի վեր յաւելում 125 միլիոն , 12 1/2 միլիոնը անգլիացի , այսինքն Անգլիոյ , Բանտայի և Աւստրալիոյ բնակիչ , բնիկ ցեղերէն զատ . և 112 1/2 միլիոնը հպա-

տակ , այսինքն Անգլ. Ափրիկէի , Հնդկաստանի և պղտիկ գաղթավայրերու բնակիչք :

Եկաւոս . — Կայսրութեան տուրքերն 1897 ին եղած են 24 միլիոն սթերլին , որուն 13 միլիոնը վճարած են Անգլիացիներ և 11 միլիոնը հպատակներ : 1871 էն ի վեր յաւելում 12 միլիոն :

Վաճառականութիւն . — Անգլիոյ ներածմանց ու արտածմանց գումարը 1897 ին 1 1/2 միլիոն սթերլին էր : 1871 էն ի վեր աւելցած է 440 միլիոն :

Սըր Ռ. Կիֆընի վիճակագրութիւններէն սա երեք մեծ իրողութիւններն ուշագրաւ են ամէնէն աւելի : 1<sup>0</sup>. Այն երկիրը , ուր ժողովուրդի , եկամուտի ու վաճառականութեան յառաջդիմութիւնք շատ արագ եղած են , Հարաւային Ափրիկէն է , որուն բնակչաց թիւը՝ 1871 էն ի վեր՝ աւելցած է 275 % , հանրային եկամուտը՝ 910 % և վաճառականութիւնը՝ 513 % : 2<sup>0</sup>. Այն երկիրը , որ ամենամեծ դեր կը խաղայ Կայսրութեան նիւթական կեանքին մէջ՝ Հնդկաստանն է , իր 300 միլիոն բնակչով : 3<sup>0</sup>. Փոխանակ յառաջդիմութեան , անկումի նշաններ կ'երեւին պղտիկ գաղթավայրերու մեծ մասին , մասնաւորապէս Կիւյանայի և Անգլիանց մէջ :

Դ. Պակսակեր . — Անգլիոյ մէջ , պանքայի գործերը մասնաւոր հաստատութիւններու կամ ընկերութիւններու ձեռքն են առաւելապէս : Ասոնցմէ զատ , կան ուրիշ պանքէտներ որք սահմանափակ գործեր միայն կ'ընեն , և վարկի վաճառականներ են աւելի :

Կազմութիւն պակսակերու . — Մասնաւոր պանքաները շատ հին առեւնէ ի վեր հաստատուած տուներ են որք մեծ ազդեցութիւն ունեցած են սեղանաւորական գործերու վրայ , բայց աստիճանաբար կ'անհետանան Անանուն ընկերութիւններու կողմէ հաստատուած պանքաներու անօրինակ մրցումին առջև : Մասնաւոր պանքաներու թիւը , ինչպէս կ'երեւայ Ա. Յուցակին մէջ (\*) 267էն (1858 ին) իջած է 102ի (1896ին) :

(\*) Յուցակներն այրուրենական կարգով դրուած են այս հաստուածին վերջը :



Անանուն ընկերութիւններու հաստատած պանքաներն ալ նուազելու վրայ են, մեծ պանքաներուն իրարու հետ ձուլուելուն հետեւանքով: 1858 էն մինչեւ 91, այս պանքաներուն թիւն 123 էն 143 ի բարձրացաւ, բայց 1896 ին ինկաւ 125 ի, և դեռ իյնալու վրայ է: Ընդհակառակը, պանքայի գործառնութիւններու սահմանը կ'ընդարձակուի հետզհետէ: 1858 ին պանքաներուն մասնաճիւղերուն թիւն էր 2005, որ 5527 ի բարձրացաւ 1896 ին: Բարձրացումը կը շարունակէ տակաւին: 1883 ին Անգլիոյ մէջ 11,000 հոգիի մէկ պանքա կ'իյնար. 1896 ին 8000 հոգիին մէկ պանքա ինկաւ:

Վիճակագրութիւն. — Բ. Յուցակին մէջ կ'երեւի սեղանաւորական գործերու ընդհանուր պատկերը: 227 պանքաներէն 149 ը միայն հաշիւ տուած են հրապարակաւ, իսկ միւս 78 մասնաւոր պանքաներու հաշիւներն հրատարակուած չեն: Ահաւասիկ ծանօթ բոլոր պանքաներուն աշխարհագրական բաժանումը:

	Մասնաւոր պակսա	Ընկ.	պակսա
Անգլիոյ պանքա		1	
Լոնտոնի պանքաները	24	18	
» և զաւառի պանքաները	4	14	
Փաւառային պանքաներ. — Հիւսիս	3	6	
» » — Լիվրբուլ	5	5	
	36	44	
Փաւառային պանքաներ			
» » — Մանչէսթըր	4	10	
» » — Եօրքշայր	7	21	
» » — Կեդր. Արեւելք	12	11	
» » — Արեւելք	2	3	
» « — Հիւսիս-Արեւելք	24	2	
» » — » - Արեւմուտք	15	8	
և Կալէսի երկիր			
Մէն կղզի և Անգլիանորման կղզիներ	1	6	
Սկոտլան		10	
Իրլանտա	2	9	
	103	124	

Մասնաւոր պանքաները գլխաւորապէս երկրագործական կեդրոններու մէջ կը գործեն աւելի, մինչ ընկերական պանքաներն իրենց դրամագլուխները կը շահագործեն ճարտարական ու առեւտրական կեդրոններու մէջ:

Իրաւագրութիւն. — Ամբողջ Անգլիոյ մէջ պանքաներու գործածած դրամագլուխը 84 միլիոն սթերլին է: Իսկ չվճարուած դրամագլուխն ու պահեստիներն այս գումարին եռապատիկն են:

Պարսֆ. — Պանքաներն հասարակութեան կը պարտին 798 միլիոն սթերլին որ 5 տարուան մէջ (1891—96) 137 միլիոնի յաւելում մը ունեցած է:

Պակսոնս. — Գ. Յուցակին մէջ կ'երեւայ պանքատոմսներու շրջաբերութեան գումարը: Սկոտլանդի և Իրլանտայի մէջ պզտիկ վճարումներու համար այնքան չէք չեն գործածեր որքան Անգլիոյ մէջ:

Ընդհանուր դրամագրութիւն. — Պանքայի գործերու համար ամբողջ Անգլիոյ մէջ գործածուած ընդհանուր դրամագլխին գումարը կը հասնի 950 միլիոն սթերլինի, որուն 30% ը կը պատկանի Լոնտոնի և Անգլիական մեծ քաղաքներու միջև գործ ընող պանքաներուն: Յետոյ կուգան զաւառային պանքաները, 25%: Երրորդ կարգն են Լոնտոնի պանքաները, 16%: Պանքաներու գոյքը կը բաղկանայ.

1. — Հասարակութեան եղած կանխաճարման	Սթերլին	%
	510,196,000	54
2. — Շահու դրուած դրամներէ	245,878,000	26
3. — Պատրաստ դրամէ	195,602,000	20
	951,676,000	100

Մախֆ եւ Շահ. — (Գ. Յուցակ). — 113 պանքաներ իրենց շահը ծանուցած են: Ասոնցմէ 65 ը միայն հրատարակած են իրենց վարչական ծախքերը: Շահաբաժիններն ընդհանրապէս եղած են 10—20%, անուանական արժէքին վրայ: Բաժնեթուղթերու ընթացքը (cours) նշանակուած է

Ե. Յուդեական մէջ : — Վիճակագիր մը Անգլիոյ 227 պանքաներուն զուտ շահը հաշուած է այսպէս . —

113 պանքաներ , որք ցուցակին մէջ նշանակուած են	Սթերլին	9,149,600
36 պանքաներ , որոց հաշուեկշռին մէջ շահը ցուցուած չէ		1,177,000
78 պանքաներ , որք հաշիւ հրատարակած չեն		300,000
Ընդհանուր շահ		10,626,600

65 պանքաներու համագումար ծախքերն են 4,228,300 Սթ. , և շահերը՝ 4,994,800 : Ծախուց համեմատութիւնն է ուրեմն 85 % : Անգլիոյ պանքային շրջաբերութեան հանած տոմսերուն արժէքը 29,813,280 Սթ. էր 1900 Դեկտ. 31 ին :

Ե. Փոխադրութիւնք . — Անգլիոյ մէջ , վերջին 150 տարիներու միջոցին , նաւարկելի գետերէն ետք արհեստական ջրանցներու , և անոնցմէ ետք թրամուէներու և երկաթուղիներու յառաջդիմութիւնը շատ արագ եղած է : Այս յառաջդիմութեան գլխաւոր շրջաններն են .

1. Նաւարկելի գետերը . — Էքզէզէր ջրանցը , որ Էքս գետին զուգահեռական է , շինուեցաւ 1566 ին : Այս շինութեան յաջորդեցին ուրիշ բազմաթիւ նմանօրինակ ձեռնարկներ : Այս կարգի վերջին մեծ աշխատութիւնը եղաւ Մըքսէյի և Իրուէլի նաւարկելի վիճակի վերածումը , 1720 ին :

2. Արհեստական ցրանցները . — 1759 ին , Պրիճուօզըրի գուքն և ձէյմս Պրիստլի արտօնուեցան շինել ջրանց մը Ուօրսլէյէ ի Սալֆորտ : Այս ճամբան ի վեր հանեց անխահանքի կարեւոր աղբիւր մը , և անոր յաջողութիւնը պատճառ եղաւ ուրիշ շատ մը ջրանցներու շինութեան , որք Լանքաշայրի ճարտարագործ գաւառն և Միտլէնտսը կապեցին Լիվըրքուլի նաւահանգստին հետ : Յետոյ շինուեցան ուրիշ ջրանցներ , որք Լանքաշայրի , Եօրքշայրի , և Միտլէնտսի ամէն մասերն հաղորդակցութեան մէջ դրին գլխաւոր նաւահանգիստներուն հետ :

3. Երկաթուղիք , ամէնէն առաջ , օժանդակ մը եղաւ ջրանցներուն : Առաջ , ձիերը կը գործածուէին իբր միջոց փոխադրութեան : Յետոյ տեսան որ երկաթեայ ուղիները նուազ ծախք կը պահանջեն քան սովորական ուղիները , մանաւանդ թէ անհամեմատ դիւրութիւններ կ'ընծայեն : Այն ատեն սկսաւ փոխադրութեանց պատմութեան Գ. շրջանը : 1801 ին , արտօնութիւն արուեցաւ Քրօյսթընէ ի Ուէնաստօրթ երկաթուղւոյ մը շինութեան , թէմիչի վրայ : Յետոյ ասոր պէս շատ ճամբաներ շինուեցան :

4. Շոգեկառնը առաջին անգամ ըլլալով քաղեց 1829 ին Սըրքըրն - Տարլինկըրն գծին վրայ : Շոգիի շրջանին առաջին 20 տարիներուն մէջ , 2000 մղոն երկաթուղի շինուեցաւ : Զեռնարկութեանց յաջողութիւնը շահադիմութեան գրգիռ ըլլալով , յաջորդ երեք տարիներուն մէջ 8500 մղոն երկաթուղի աւարտեցաւ : Յետոյ պահ մը դադար : Վստահութիւնը վերագարձաւ : 1854 ի վերջերը , 8000 մղոն տեղ ճամբայ շինուեցաւ , որու 3/4 ը՝ կրկին գիծ : 1854 ին և յաջորդ տարիներուն , շինուած գիծերէն շատերը միացան : Անգլիոյ երկաթուղիները մասնաւորներու սեփականութիւնն են : Ասով հանդերձ կառավարութիւնը հակակշիռ ի գործ կը դնէ անոնց վրայ : Այս հատուածին յարակից ցուցակներուն մէջ կ'երևի վիճակագրութիւնը Անգլիոյ ամէնէն կարեւոր 14 ընկերութիւններու , որոց իւրաքանչիւրին դրամագուխը 10 միլիոն սթերլինը կ'անցնի :

2. Երկրագործութիւն . — Տարազագործութեան , վաճառականութեան և փոխադրութեան յառաջդիմութիւնք շատ աւելի արագ եղած են Անգլիոյ մէջ քան երկրագործական ճարտարարուեստներուն յառաջդիմութիւնը : Վերջին մարդահամարին (1891) , երկրագործութեան պարապող անձերու թիւն էր 2 1/2 միլիոն , որոց 6 % ը կ'ին : Է. Յուդեական մէջ պատկերացած է 1891 ին Անգլիոյ երկրագործ ժողովրդեան բաժանումն և մշտեալ հողերուն յարաբերական կարեւորութիւնը : Երկրագործ ժողովրդեան կէսէն աւելին հաստատուած է Անգլիոյ և Կալէսի երկրին մէջ , և 40 % ը՝

Իրլանտայի մէջ : Յետոյ կուգան Անգլիական կղզիները, 80% : 1898 ի հունձքերուն վիճակագրութիւնը ամփոփուած է Ը. Յուցակին մէջ : Մշակութիւնը մեծապէս կը տարբերի Անգլիոյ իւրաքանչիւր մասերուն մէջ : Մեծն Բրիտանիոյ հերկելի հողը 47% է (Յուցակ թ.) և մարգագետինները՝ 51% , իսկ Իրլանտայի մէջ՝ 24, 7% և 75% : Իրլանտա աւելի կաթնային արտադրութիւններու երկիրն է , մինչ Մեծն Բրիտանիոյ մէջ արտադրութեան բնութիւնը տեղւոյն համեմատ կը փոխուի մեծապէս :

Հուճնճ. — Ը. և Ժ. Յուցակներուն մէջ խօսուած է գլխաւոր հունձքերուն վրայ : Իրլանտա մեծ տեղ տուած է գետնախնձորի մշակութեան : Գետնախնձորն այս երկրին աշխատասէր ժողովրդեան գլխաւոր սնունդը կը կազմէ : Շողգամը , ձմեռ ատեն , իբր սնունդ կը արուի արջաուններուն : Մեծն Բրիտանիա իր 33,028,172 բնակչով 3,280,000 թօնօ գետնախնձոր կ'արտադրէ , մինչ Իրլանտա , այս բնակչութեան 1/7 ով , 2,940,000 թօնօ կ'արտադրէ :

Է. Արսաֆիւն վաճառականութիւն և ևաւարկութիւն . — Անգլիոյ և ուրիշ երկիրներու միջև ապրանքներու փոխանակութիւնը մեծ մասամբ անգլիական նաւերով կը կատարուի : 1898 ին , 49,774 շոգեհաւեր ու առագաստանաւեր , ամենքը 34 1/2 միլիոն թօնօ տարողութեամբ , մտած են Անգլիոյ նաւահանգիստները : Ասոնցմէ 30,298 անգլիական էին և միւսները Թրանսական , Գերմանական և այլն :

Արսածութիւն և ևերածութիւն . — 1. և 2. ցուցակներուն մէջ կ'երեւին Անգլիոյ արտաքին վաճառականութեան գլխաւոր արդիւնքները , որոց արժէքն էր , 1898 ին , 764 միլիոն սղերլին , 1894 էն ի վեր 80 միլիոնի յաւելմամբ : Երածութիւնները միշտ աւելի են արտածութիւններէն : 1898 ին , այս առաւելութիւնն էր 176 միլիոն : 3. և 4. ցուցակներուն մէջ կ'երեւի 1898 ի և 1900 ի վաճառականութեան ծաւալը : Պիտի տեսնուի որ անգլիական ստացուածներու մէջ Հրնդկատան իր զրկածէն աւելի ապրանք կ'ստանայ մայր հայրենիքէն : Այսպէս է նաև Բարեյոյսի գաղթավայրը , մինչ

Գ Ի Ն Բ. Ն Ա Տ Ո Ր Ի

## 12 ՂՐՈՒՇ

Գաւառաց հաւեւար՝ իբր բոսսի ծախսի՝ 3 դրուշ աւելի

ԿԱՆԵԻԿԻ ՀԱՄԱՐ 15 % ԶԵՂԶ

Հասցէ. — ՍԻՄՐՈՆ ՉԷՕՄԼԷՔՁԵԱՆ  
Խմբագրատուն « Բիւզանդիոն » Հայաբերքի  
Պապը Ալի հասեւսի թիւ 23—25 Կ. Պոլիս

Կ ա մ

ԻԶՄԻՏ ՕԹԷԼ, ԹԻԻ 21

Կ. Պոլիս, Էսկի Զապրիէ հատտեւսի

12 ՂՐՈՒՇ

معارف عمومیہ نظارت جلیہ سبلہ مطبوعات داخلیہ ادارہ بیہ سنک  
۲۷۱ نومرولی رخصتیلہ طبع اولتمشدر

« Ազգային գրադարան



NL0083828

